

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկովի:
Թիֆլիսում գրվում են միմյաւ, Նիժնորոգատան մէջ:
Օտարազապաղիքի դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаск“:

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իրաւաքնիւր բառին 2 կոպէկ:

ՌՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Վերջ չը կայ:—Ն ե ռ զ ի ն տ ե ո ռ թ ի շ ն
Նամակ Գրիգորոսովից: Նամակ Նովո-Իգումովից
Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Գանձակից
Նամակ Աստրախանից: Նամակ Նիժնորոգին: Ներքին
ուրբեր:—Արտաքին տ ե ո ռ թ ի շ ն: Թիֆլիս:
Ճրանկա:—(Մշակի): Հեռագիրներ: Յայտարար-
ութիւններ:

ՎԵՐՋ ԶԸ ԿԱՅ

Երբ որ վիճաբանութիւն ա-
նողները անաղիւ կերպով են
վիճաբանում, յեղաշրջում են ճըշ-
մարտութիւնը,—այն ժամանակ
վէճը երբէք վերջ չունի:

Մենք ստիպված ենք դար-
ձեալ մի անգամ պարզ տ է-
զիսներ զննել մեր յարուցած
խնդրի մասին կրօնի և ազգու-
թեան տարբերութեան վերա-
բերութեամբ:

Ոչ մի ազգութիւն չը կայ,
որ ամբողջութեամբ մի դաւա-
նութեան պատկանէր:

Կրօնը էական մասը չէ մի
ազգութեան. դասնութիւնները
կարող են այլ և այլ լինել, բայց
ազգութիւնը այդ այլ և այլ
կրօններ դաւանողների դարձեալ
կարող է մի լինել:

Ազգութեան էական մասերը
սրանք են. մայրենի լեզու, հայ-
րենիք և ցեղ:

Ըռանց հայրենիք, առանց
հաստատ հող, որոշ գետին ուրի-
տակ, ոչ մի ազգութիւն գոյու-
թիւն ունենալ չէ կարող: Եթէ
ազգութիւնը կորցնում է իր
հայրենիքը և ցրվում է ամբողջ
աշխարհի երեսի վրա, նա այլ
ևս ազգութիւն չէ:

Իայց ազգութիւնը կարող է
կորցնել չին հայրենիքը և այն-
քան այժմ ունենալ որ ստեղծի
իր համար մի նոր հայրենիք:
Եւն ժամանակ նա դարձեալ
կարող է շարունակել գոյութիւն
ունենալ որպէս ազգութիւն, ե-
թէ միայն պահպանել է և զար-
գացնում է իր մայրենի լեզուն:

Յեղը մինչև անգամ կարող է
փոխվել, եթէ ազգութեան ան-

դամները խառնվեցան ուրիշ ցե-
ղի հետ:

Կրօնը կարող է փոխվել, այլ
և այլ կրօններ մտնել ազգու-
թեան մէջ,—դարձեալ ազգու-
թիւնը կը մնայ, եթէ ազգու-
թիւնը պահպանել է մայրենի
լեզուն:

Յեղը կարող է փոխվել, ուրիշ
ցեղերի հետ խառնվել,—դար-
ձեալ ազգութիւնը կը մնայ, եթէ
մայրենի լեզուն պահպանվի:

Հայրենիքը կարող է փոխվել,
նոր հայրենիք ստեղծվել,—գար-
ձեալ ազգութիւնը կը պահպան-
վի, եթէ մայրենի լեզուն պա-
հպանված լինի:

Իայց եթէ մայրենի լեզուն
կորչի, մայրենի լեզուն անհետա-
նայ ազգութիւնից,—անմիջապէս
ինքն ազգութիւնն էլ, որպէս
ազգութիւն կանհետանայ: Կը
մնան միայն անհատներ, բայց
ազգութիւնը կը կորչի:

Եթէ մի ազգութիւն իր կրօնը
պահպանեց, բայց կորցրեց հայ-
րենիքը, իսկ կրօնի հետ պահպա-
նեց իր լեզուն,—նա դարձեալ,
եթէ բաւական բազմամիւս է և
ցրված չէ, կարող է ստեղծել մի
նոր հայրենիք, թէև այդ շատ
քիչ ազգերին է աճողվել և այ-
ժմ երկրագնդի վրա ազատ
տեղեր չը կան:

Եթէ մի ազգութիւն պահպա-
նելով կրօնը, պահպանի մայրենի
լեզուն բայց մնայ հայրենիքում,—
նա պէտք է շատափ վերականգնա-
նացնել իր մայրենի լեզուն, որպէս
զի կենդանանայ որպէս ազգու-
թիւն, եթէ ոչ նա մնալով հայ-
րենիքում և պահպանելով կրօնն
էլ, եթէ կորցրեց իր մայրենի
լեզուն, կը լուծվի մի այլ, հա-
րեան ազգութեան մէջ, ուրեմն
կանհետանայ որպէս ազգու-
թիւն:

Եթէ մի ազգութիւն հաւա-
տարիմ պահպանելով իր կրօնը,
կորցրեց իր մայրենի լեզուն և
իր հայրենիքը,—այլ ևս ոչինչ չի
փրկի նրան որպէս ազգութիւն:
Կա գուցէ միշտ կը մնայ որպէս

առանձին ազանդ, բայց այլ ևս
երբէք չէ կոչվել ազգութիւն:

Ուրեմն կրօնի, ցեղի, մինչև
անգամ հայրենիքի փոխվել չէ
փոխում ազգութիւնը: Միայն
լեզուի փոխվելը կատարելապէս
ոչնչացնում է ազգութիւնը:

Ազգութիւնը առանց ընդհա-
նուր հայրենիքի և մի մայրենի
լեզուի չէ կարող գոյութիւն ու-
նենալ, բայց ունենալով որոշ
սահմաններով հող և յայտնի
ազգային լեզու, ինչքան էլ բազ-
մամիւս լինին այդ ազգութեան
մէջ այլ և այլ դասնութիւններ,
ինչքան էլ խառն լինէր այդ ազ-
գութեան ցեղը, նա դարձեալ
կը լինի մի ազգութիւն:

Հայրենիք անշուշտ պէտք է
ունենալ: Եթէ կորած է հինը,
պէտք է ստեղծել նորը: Մայ-
րենի լեզուն պէտք է ունենալ,
որովհետև նա է մի ազգութիւն
միակի որոշող միակ գործիքը:

Իայց եթէ մի ազգութեան
ամբողջ գոյութիւնը միմիայն կը-
րօնից է կախված,—նա կը լինի,
այո՛, հաստատ ազանդ, բայց
երբէք չի լինի ազգութիւն:

Այդ պատճառով այն հայը
որ ապրում է հայրենիքում և
խօսում է հայերէն լեզուով, մեզ
համար մի և նոյն է նա ինչ
կրօնին է պատկանում: Կա
դարձեալ հայ է, նա աւելի հայ
է, քան թէ այն հայը որ կը օ-
րով հայ է,—թէև դա հնարա-
ւոր բան չէ,—բայց ապրում է
իր հայրենիքից դուրս և չը գի-
տէ իր մայրենի լեզուն:

Կաթոլիկ կամ բողոքական
հայը, որ գիտէ իր մայրենի լե-
զուն և ապրում է իր հայրենի-
քում,—նա աւելի հայ է, քան
թէ լուսաւորչական հայը, որ
ապրում է հայրենիքից դուրս և
չը գիտէ իր մայրենի լեզու, կամ
նոյն իսկ ապրում է հայրենիքում
և չը գիտէ իր մայրենի լեզուն:

Կա պղպիտով յայտնվում է
որ լուսաւորչականների մեծ մա-
սը, որոնք չը գիտեն իրանց
մայրենի լեզուն, իսկապէս հայ

էլ չեն, որովհետև կորցրին այն
Փակտորը, մայրենի լեզուն, որ
չուրում է մի ազգութիւն միակից:
Ուրեմն ո՛ր մնաց այն սկզբունքը
թէ կրօնն է ազգութեան նեցուկ,
երբ կրօնը ունելով կարելի է
կատարելապէս կորցնել ազգու-
թիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԻՐԳՈՐՈՎԻՅՑ

Ապտեմբերի 30

Այն չարը, որ պարզեց (Մշակը) վերջնակա-
նապէս, ներթափանցելով խաւարամտների ամեն առե-
նակ կեղտոտ գրաբարութիւններին, նրա այն
յաղթանակն է, որ պիտի համարվի (Մշակի)
անցեալ և ապագա գործունէութեան զարդը: Այդ
չարը կրօնի և ազգութեան գաղափարների մի-
մեանց տարբերելն է, որ դարերի ընթացքում
հայոց ազգի համար միշտ մի անթափանցելի խոստ
է եղել: Վերջապէս ով իրան չէ ուղում գտել հա-
մարել մի փոքր բանականութիւնը, նա պիտի
հասկանար թէ յիշատի ազգութիւնն անելով
հայը չը պիտի երեսկայի իր աչքի առջև անշուշտ
կիջմանի գանդակաւորութիւն կամ վարդապետի
վեցարը, այլ հայկական արիւնք, լեզուն և շարժի-
ք: Ամսին 15-ին, անցնելով Օղէտայից Բիշնով,
մտադրել էի մի քանի օր մնալ այդտեղ իմ սեփա-
կան գործերիս պատճառով, բայց այնպէս
պատահեց, որ ստիպված եղայ շուտով վերադառ-
նալ Օղէտ, շահեղիւցելով և մի քանի օր անհամա-
մնալով Գրիգորոսովի փոքրիկ քաղաքը: Այսպիսով
իմ անողկնեց բաւական տեղեկութիւններ հաւա-
քել այս կողմերի հայ ազգաբնակչութեան մասին:
Ճշմարիտն ստե՛ծ, երբէք մտքումս էլ չէր անց-
նում թէ Ռէսպուբլիկայի վիճակում կարող եմ զեռ-
նել մի այդպիսի մեծ հայոց տարր և այդպիսի դո-
րի նիւթական կողմից: Հայաբնակ քաղաքները
հետեւեալներն են՝ Բիշնով, Օրէյ, Էնիշու, Բէյց,
Աքիրման, Բզմայիլ, Բաւոշ, Բիլի, Օղէտսա,
Գրիգորապոլ, Նիկոպոլի և Սերսոն: Այս վերջին
չորս քաղաքները ըստ աշխարհագրութեան թէև
պատկանում են Սերսոնեան նահանգին, բայց հա-
յոց հոգեւոր վիճակաբանութեան համեմատ բոլորի
էլ Նիկոպոլեանիցն է: Նա կազմում են մի անհա-
ժան վիճակ, որ կրում է Ռէսպուբլիկայի վիճակի
անունը: Վերոյիշեալ քաղաքները շրջապատված են
մեծ գիւղերով, որոնց մէջ կան նոյնպէս բազմա-
թիւ հայեր: Հայ գիւղականը պարագում է այս-
տեղ երկրագործութեամբ, պարտիկապատկեմամբ
գրաստապատկեմամբ և գիւղատնտեսութեան մի
քանի այլ ճիւղերով: Կարելի է ամենայն վստա-
հաւանամք ասել թէ համայն Կովկասի և Անդը-
կովկասի մէջ բնաւ չէ կարելի գտնել մի ամբողջ
որի մէջ ապրող հայ գիւղացիներ և քաղաքակե-
րներ այնպիսի ունեւոր լինէին, որպիսի այստեղի
հայերը, որոնց մէջ կան այնպիսի անուանի կա-
ռուածատէրեր, ինչպէս Մանուկ-բէյ, Իլիսան Ուլի-
սիւ (աղետաօրէն Ուլաքի), Ուրֆալ եղբայրներ,
Գալիւով, Բալիւս, Բոզաւ, Անուշ, Լիւթի, Զաֆի-Գա-
րաբէյ և այլն: Սղանից իրաւաքնիւր ունի այն-
պիսի ապարանքներ, չեղծ մարտնչոյներ և զբոսա-
րաններ, որոնց վրա կովկասեցի հարուստ հայը
հասկացողութիւն անգամ չէ կարող կազմել: Նոյն-
քան կարելի է ասել գիւղացիների վերաբերու-
թեամբ, համեմատելով նրանց կովկասեան հայ
գիւղացիների հետ:

Այս բոլորը վերաբերում է միայն Դեմեթական
կողմին: Իսկ զաւրով այստեղի հայերի հայոս-
թեանը, այս բառի կատարեալ մտքով, Ռէսպու-

